GEORGE GASCÓN
LOS ANGELES COUNTY DISTRICT ATTORNEY

2020 թվականի դեկտեմբերի 7-ին Ջորջ Գասկոնը երդում տվեց որպես Լոս Անջելեսի 43-րդ շրջանի դատախազ՝ քրեական արդարադատության բարեփոխումների իր տեսլական մոտեցումը տրամադրելով երկրի ամենամեծ տեղական դատախազությանը:

Իր պաշտոնավարման առաջին օրը Գասկոնը դադարեցրեց մահապատժի կիրառումը որպես դատավճիռ Լոս Անջելեսում: Նա դադարեցրեց երեխաների վրա գործ հարուցել որպես մեծահասակ, վերացրեց պատժաչափերի բարձրացումը, որոնք օգուտ չեն բերում հանրային անվտանգությանը և նպաստում զանգվածային բանտարկությանը, և համաձայն նահանգային օրենքի հանեց դրամական գրավը զանցանքների կամ ոչ լուրջ կամ ոչ բռնի հանցագործությունների համար:

Նախկին ոստիկանի համար հանրային անվտանգությունը մնում է նրա առաջնահերթությունը:

Որպես առաջադեմ դատախազների առաջատար՝ Գասկոնն աշխատում է քրեական արդարադատության բարեփոխումների ազգային մոդել կառուցելու ուղղությամբ, որն աջակցում և վերականգնում է հանցագործության զոհերին՝ միաժամանակ անդրադառնալով զանգվածային բանտարկությանը, ռասիզմին և սոցիալական համակարգային անհավասարությանը:

Նա առաջին շրջանային դատախազն էր երկրում, ով կոչ արեց դադարեցնել դրամական գրավը և գործարկել մարիխուանայի դատավճիռների ավտոմատ մաքրման ծրագիր և միակ շրջանային դատախազը Կալիֆորնիայում, ով պաշտպանեց նահանգային օրենքը, որը

ստեղծեց ավելի խիստ չափանիշ ոստոստիկանության կողմից մահացու ուժի կիրառման պարսգայում:

Գասկոնը Լոս Անջելեսի ոստիկանության բաժանմունքում բարձրացավ պարեկային սպայից մինչև ոստիկանապետի օգնական, որից հետո ծառայեց որպես ոստիկանապետ Արիզոնա նահանգի Մեսա քաղաքում, նախքան Սան Ֆրանցիսկոյի առաջին լատինաամերիկացի ոստիկանապետի կոչումը: Նա նշանակվել է Սան Ֆրանցիսկոյի շրջանային դատախազ 2011 թվականին՝ դառնալով երկրի առաջին ոստիկանապետը, ով դարձել է շրջանային դատախազ:

13 տարեկանում Գասկոնը ծնողների հետ Կուբայից գաղթել է Միացյալ Նահանգներ: ԱՄՆ բանակում ծառայելուց հետո նա ստացել է պատմության բակալավրի կոչում Լոնգ Բիչի Կալիֆորնիայի պետական համալսարանում և իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճան՝ Արևմտյան պետական համալսարանի իրավագիտության քոլեջում:

Նա ամուսնացած է <<Էմմի>> մրցանակի եռակի դափնեկիր՝ լրագրողուհի Ֆաբիոլա Կրամսկիի հետ: